ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Բ. Դ. ԳՐԵԿՈՎԻ ՃԱՌԸ

Թույլ տվեք ինձ Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի անունից ջերմ ողջույն և շնորհավորանք հաղորդել հայ ժողովրդին և Հայկական ռեսպուբլիկայի կառավարությանը՝ հայկական կլուտուրայի մեծ տոնի առթիվ։

1943 թվականի նոյեմբերի 29-ի օրը կմտնի ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլ նաև մեր բազմաժողովուրդ պետության պատմության մեջ, որովհետև կլուտուրայի նոր օջախը կվառվի ոչ միայն Հայաստանի համար։ Նա կստեղծի համաշխարհային նշանակություն ունեցող արժեքներ։

Հայ ժողովրդի, ՍՍՌՄ ամենահին ժողովուրդներից մեկի, կուլտուրան շատ դարերի ընթացքում արտահայտվել է բազմազան եղանակներով և ամենազանազան ձևերով։

Ես ուզում եմ ընդգծել նրա մեկ նշանավոր կողմը. դա հայ ժողովրդի հետաքրքրությունն է դեպի պատմությունը, որ ինքնին մի վառ ցուցանիշ է։

Մի ժողովուրդ, որը իր մասին մտածում է առանց այսօրվան օրը երևկվանից զատելու, որը իրեն դիտակցել է իր սերունդների դումարով որպես մի միասնական ամբողջություն, չի կարող չհետաքրքրվել իր անցյալով. տակավին ներկայի և անցյալի կապը հասկանալու կարողությունը հեշտ չի տրվում, և նրանք, ովքեր կարողացել են այդ անել արդեն մեր թվականության 5-րդ դարում, այսինքն 500 տարով ավելի վաղ, քան այդ բանին հասավ Արևմտյան Եվրոպան, կարող են համարձակորեն խոսել իրենց բարձրը կլուտուրայի մասին և նրանով բավական արժանավայել հպարտանալ։

Ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ հայ ժողովուրդը այդ տեսակետից առաջին շարքերումն է կանգնած։

Հայ ժողովուրդը իրեն միմիայն պատմության բնագավառում չի դրսևորել։ Նա զարգացրել է գիտության ուրիշ ճյուղեր ևս, ստեղծել է իր արվեստը։

Ներկայումս հայկական հին կուլտուրայի հոյակապ շենքը պսակվում է գիտության նոր տաճարի, բոլոր գիտությունների պանթեոնի ստեղծումով։

Այն, ինչ որ մինչև այժմ ապրել և զարգացել է բաժան-բաժան, այժմ պետք է կենտրոնացվի հայկական Ակադեմիայի հզոր հաստատության մեջ։

Ես հավատացած եմ, որ այն սերտ եղբայրական կապը և փոխադարձ օժանդակությունը, որ սահմանվել է Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի և Հայաստանի գիտական հաստատությունների միջև, Հայկական Գիտությունների Ակադեմիայի ստեղծումով է՛լ ավելի կամրանա։

Խիստ թանկ է այն հիշատակությունը, որ առնում է Հ. Ա. Օրբելին հին Ռուսիայի և Հայաստանի միջև եղած վաղեմի կապի մասին։ Այն օրինակները, որ իր ճառի մեջ նշեց հայկական Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Հ. Ա. Օրբելին, ես կցանկանայի ավելացնել 11-րդ դարի հայ գրականության մեջ նշված այն վառ փաստերը, որոնք ասում են, որ հայ ժողովուրդը ոչ միայն հետևել է, թե ինչ է կատարվել Դնեպրի բարձր ափին՝ ռուսական հին Կիև քաղաքում, այլև համակրել և գաղափարապես օժանդակել է ռուս ժողովրդի պայքարին իր ազգային կուլտուրայի համար։ Այդ մոմենտները չեն կարող մոռացվել, դրանք երկու ժողովուրդների բարի հարաբերությունների համար մի երաշխիք են նաև ապագայում։

Կեցցե՛ հայկական նոր Ակադեմիան։

Կեցցե՛ն նոր ակադեմիկոսները։

Մենք այժմ չենք կարող չհիշել նրանց, ովքեր իրենց կրծքով այնպես փայլուն կերպով պաշտպանում են մեր ընդհանուր Հայրենիքը։ Չենք կարող չհիշել մեր հաղթական կարմիր Բանակը, որի հաջողությունների շնորհիվ մենք կարողանում ենք ներկայումս մասնակցել Հայաստանի և մեր երկրի բոլոր ժողովուրդների կուլտուրայի այս տոնին։

Կեցցե՛ մեր սիրելի Կարմիր Բանակը և նրա մեծ առաջնորդ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը, որը մեզ դեպի հաղթանակ է առաջնորդում մարտադաշտում և աշխատանքի ոլորտում գիտության բնագավառում։